

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը լայն է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն ինչով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԺՐՈՒՆԻ

Նունէ Միքայէլեան Իգիթեանը և Յովհաննէս Շալամեանը յայտնում են խորին
շնորհակալութիւն անձանց՝ ծանօթներին, բարեկամներին և իրանց հանգու-
ցեալ եղբոր՝ Դ. Ա. Ի. Թ. Ի սիրելի ընկերներին ու պաշտօնակիցներին, որոնք իրանց
ներկայութեամբ պատուեցին հանգուցեալի յիշատակը՝ ներկայ գտնվելով նրա յուշա-
կաւորութեանը:
1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գարտեղի առիթով.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Հերբուսիների հոգեբանութիւնից. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի
շուրջը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԳԱՐՏԵՂԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակ» պատրուկը համարում գետեղ-
ված քարտեղը ներկայացնում է Լաօզու-
նեան թերակղզու հարաւային մասը, որ
յայտնի է Կվանտուն անունով. Ռուս-
հայկական պատերազմի առաջին օրերից
Կվանտունի շրջանը բնակել է իր վրա
ընդհանուր ուշադրութիւնը, որովհետեւ
այդտեղից սկսվեցին կռուող կողմերի ա-
ռաջին ընդհարումները: Կվանտունի ծայ-
րում գտնվող Պօրտ-Արտուրը նաւա-
հանգիստը, որտեղ պատուարվել է ռու-
սաց նաւատորմի մի պատկանելի բաժի-
նը, կազմում էր եսպոնական յարձակում-
ների գլխաւոր կէտը մինչև վերջին ժա-
մանակները, երբ տեղի ունեցան լուրջ
գործեր Նայու գետի շրջանում:

Այժմ Կվանտունեան թերակղզին ստա-
ցել է մի առանձին հետաքրքրութիւն շը-
նորիւ այն բանի, որ եսպոնական զորքը
ափ է իջել արևելեան ծովեզրում և ցա-
մաքի կողմից գնում է պաշարելու Պօրտ-
Արտուրի բերդը:

Պաշտօնական հեռագրերը, որ ապփեց
մեր լրագրում, յայտնեց, թէ եսպոնական

զորքը իջել է Բիցզիվօ քաղաքի շրջա-
կալքում: Այդ քաղաքը գտնվում է Կվան-
տունի արևելեան ծովեզրում: Բիցզիվօի
մօտ ծովը բաւական ծանծաղ է, բայց
մակընթացութեան ժամանակ ջուրը հաս-
նում է 12—13 ոտնաչափ խորութեան և
նաւակներով շատ յարմար է մօտենալ քա-
ղաքին:

Բիցզիվօն—սովորական չինական մի
քաղաք է, շինված կիսալեռան վրա: Յայտ-
նի է իր աղանքներով և ունի բաւական
աշխույժ առևտուր: Բիցզիվօում սովորա-
կան ժամանակ գտնվում էր կօզակներից
և ուրիշ զինուորներից կազմված մի փոքր
վաշտ, որի պաշտօնն էր պիսաւորապէս
պաշտպանել քաղաքը խուսիսուկներից, ո-
րոնցով լիքն է քաղաքի շրջակայքը: Քա-
ղաքում գտնվում էին ռուսական պօստ-
հեռագրական և հաշտարար դատարանի
ատենաները: Բիցզիվօից մինչև երկաթու-
ղու Պուլանգեան կայարանը մօտ 30
վերստ է: Ծովի կողմից Բիցզիվօի և
Պօրտ-Արտուրի մէջ տարածութիւնը հա-
ւասար է մերձաւորապէս 130 վերստի,
մօտ 6 ժամվայ ճանապարհ շոգեխաւով:
Ցամաքով այդ տարածութիւնը մօտ 180
վերստ է:

Թերակղզու ամենանեղ տեղում գտն-
վում է Յգինչօուի պարանոցը, որի արև-
մտեան ափում գտնվում է Յգինչօու
քաղաքը, իսկ հարաւարևելեան ափում
ընդարձակ Տալինեանի ծոցը: Յգինչօուն
—հին քաղաք է, շրջապատված բարդէն,
առանձնաւոր բարձր պարիսպներով: Այդ
բերդից ոչ հեռու գէպի արևելք բարձրա-

նում է Սամսոն սարը, որ ունի 2210 ոտ-
նաչափ բարձրութիւն: Յգինչօուն գտն-
վում է Ընկերութեան Ծոցի ափում:
Տալինեանի ծոցում գտնվում է Դալնիյ
քաղաքը, որ ամրացված է և ունի ընդար-
ձակ նաւահանգիստ: Դալնիում շինված
են վերջին տարիներում եւրօպական ճա-
շակով տներ, որոնցից մի բանիսը շատ
հոյակապ է:

Երկաթուղին, որ գնում է Պօրտ-Ար-
տուրից դէպի հիւսիս մինչև Սարբին,
անցնում է մեծ մասամբ Կվանտունեան
թերակղզու արևմտեան ափի մօտով և ու-
նի մի յատուկ ճիւղ դէպի Դալնիյ: Կայ-
արաններն են հարաւից դէպի հիւսիս,
Ինչնգի, Նանգուանլին, Դաֆանչան,
Սանչիլիպու և Պուլանգեան: Իսկ այնու-
հետեւ գալիս է Վաֆանգեան կայարանը,
որ մեր քաղաքի սահմաններից դուրս է:
Պուլանգեան կայարանը գտնվում է Ա-
գամի ծովածոցի ափի մօտ: Այդ ծովա-
ծոցով սահմանափակվում է Կվանտունեան
շրջանը և սկսվում է մի շրջան, որ քա-
տէզի վրա չէզոք անունով է նշանակված:
Երկաթուղու գիծը իր ամեն մի կէտում
գտնվում էր հետակ և հեծեալ պահա-
պանների մշտական հսկողութեան տակ:
Բացի դրանից մեծ կայարաններում կային
թնդանօթներ:

Վաֆանգեան կայարանը շինված է լեռ-
նոտ տեղում: Նա ունէր մի փոքր արհես-
տանոց և կարկատանոց շոգեկաւքերի հա-
մար:

Պօրտ-Արտուրի մասին մենք առանձին
տեղեկութիւններ չենք հաղորդում, որով-
հետեւ նա շատ յայտնի է մեր ընթերցող-
ներին, բայց աւելի պարզ գաղափար առ-
ւել համար նրա գիւղեր և ամբողջ շրջա-
կայքի մասին, մենք գետեղել ենք նրա
շրջակայքի քարտեղը առանձին քաղաքու-
սեակում: Այդտեղ ընթերցողը կր տեսնէ
և ներքին ջրի աւազանը, որ բաժանված է
Տիգրեան կամ Վազրեան թերակղզու, և
Ոսկեհարը, և ջրամբարները, և բերդը, և

հեռադրատունը և ելքաբաղան կայարա-
նը, մերձակայ գիւղերով հանդերձ:

Յիշատակութեան արժանի է Կվանտու-
նեան թերակղզու ծայրում գտնվող Լաօ-
տէչան հրուանդանը, որի ետևում թաղ-
նրված եսպոնական նաւատորմը մի քանի
անգամ վերածիլ կրակով ուժեղացել է
Պօրտ-Արտուրը:

Այս նախնական աշխարհագրական տե-
ղեկութիւններից յետոյ, առաջ ենք բե-
րում գեներալ Սարկելիչի պաշտօնական
հեռագրից հետևեալը եսպոնացիների ծով-
ափ իջնելու մասին Բիցզիվօի մօտ:
«Սարկելի 21-ին ծովում, Բիցզիվօի և Կօ-
նէչնի—Տէրմինալ հրուանդանի միջև երե-
ւացին մինչև 50 եսպոնական փոխաւորող
նաւեր. թշնամու ոյժերը և դիտաւորու-
թիւններն իմանալու համար ուղարկեցին
կամաւոր կօմանդաներ, իսկ Պուլանգեա-
նից—մի ոչ մեծ հետակ զօրաբաժին: Ու-
ղարկված զօրամասերի հետախուզութիւ-
նից իմացեց, որ եսպոնացիների զօրա-
բաժինը, բաղկացած տասը հազար մար-
դուց, գետեղվել է շրջակայ գիւղերում:
Ռուս ազգաբնակչութիւնը հեռացաւ Բից-
զիվօից: Կատարելով իր պարտքը, մեր
փոքր զօրաբաժինը սկսեց ապրիլի 22-ի
երեկոյեան մօտերը հեռանալ, բայց ճա-
նապարհին հանդիպեց թշնամու զօրացանց
ոյժերին և ճանապարհը փոխեց: Ապրիլի
22-ին, մօտ առաւօտեան 8 ժամին, նը-
րանց հետախույզ խմբերը երեւցին Պու-
լանգեանի մօտ, երկաթուղու կայարանի
մօտ, Ագամի ծովածոցի մօտ: Չինական
տեղեկութիւնների համեմատ, ընդամենը
ափ իջան մինչև քսան հազար ես-
պոնացիներ գաղափար և պաշարող ար-
տիւլէրիայով: Բիցզիվօն գրավւած է մօտ
1500 մարդուց բաղկացած զօրաբաժնով:
Այնուհետև ապրիլի 27-ին եսպոնական
խմբերը հեռացան երկաթուղու գծից:
4-րդ անդամաւորեան երկաթուղային բա-
տալիօնի փոխ-գնդապետ Սպիրիդոնովը
այդ բատալիօնի պաշտօնեաներով վերա-
կանչեց երկաթուղին դէպի Պօրտ-Ար-
տուր: Ապրիլի 26 և 27-ին եսպոնական
առաջապահ խմբերը գրաւեցին Մուցդեա-
տին գիւղը, Պուլանգեանից 11 կմ 12
վերստ դէպի հարաւ-արևելք և Սեուգեա-
տին գիւղը, Պուլանգեանից 12 վերստ հե-
ռու դէպի հարաւ-արևելք: Նրանց օրիշ
առաջապահ խմբերը դատարկել են Բից-
զիվօից 10 վերստ դէպի արևմուտք:

Մեր ընթերցողները անկասկած յիշում
են պրօֆէսոր Կիւի կարծիքը, որ նա
յայտնել է «С. П. Вѣд.» լրագրի թղթակ-
ցին Պօրտ-Արտուրի պաշարման մասին:
Եսպոնացիները, մասնաւորապէս պրօֆէսորի
կարծիքով, անշտաւերով Պօրտ-Արտուրը
միացած աշխարհից, կուսենաւ այն գե-
րազանցութիւնը, որ իրանք ապահովված
կը լինեն մթերքների կողմից, մինչդեռ
բերդի մէջ եղողները պէտք է բաւակա-
նանան նրանով, ինչ որ ամբարել են
վաղօրոք: Պօրտ-Արտուրը առաջին շրջա-
նում ուժեղ կը լինի իր թնդանօթներով,
որովհետեւ նրանք առաջուց կազմ ու
պատրաստ գրված են, մինչդեռ եսպո-
նացիները գեռ նոր պէտք է բերեն թն-
դանօթները և նրանց դատաւորին յարմար
տեղերում: Սակայն կանաց կամաց կա-
րող է զինուորական գերազանցութիւնը
անցնել պաշարողների կողմը, մասնաւոր
որ չը կայ բերդ աշխարհում, որը վերջ
ի վերջու երկարատե պաշարումից յետոյ
չը վերցվի: Ներկայումս Պօրտ-Արտուրի
հին պարսպի փոխարէն փորված է
խրամատ, որ կը դժուարացնէ պաշա-
րողների գործը, պահանջելով ժա-
մանակ, սթերք և թնդանօթների կրկնա-
պատիկ աւելի մեծ թիւ, քան ունեն բեր-
դի մէջ եղողները:



ԿՎԱՆՏՈՒՆԵԱՆ ԶՐՋԱՆԸ ԵՒ ՊՕՐՏԱՐՏՈՒՐ

Типографія «ГЕЛ. МЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81